

243

9 2061-4

97

ՔԱՂԱՔԱՆ ԼՈՒ ԳԼԽ. ՎԵՐՏՈՒԹՅՈՒՆ

Ե. Զ. ԵՍԻՆ

ՏՐԱԿՏՈՐԻ

ՊԱՅԹԱՐԸ

ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ

ՏՐԱԿՏՈՐ ԳՅՈՒՂԵՑՈՒ ՈԴՆԵԿԵՆՆ Ե



Ա. Հ Հ Ա Ռ Ո Վ Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ե

Յ Ե Ր Ե Վ Ա Ն - 1930

631.3

5-74

04 AUG 2010

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐ ԳԼԽ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ե. Զ. ԵՍԻՆ

631.3

6-74

— ՏՐԱԿՏՈՐԻ ՊԱՅՔԱՐԸ
ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ —

17356

ՏՐԱԿՏՈՐԻ ԴՅՈՒԼԵՑՈՒ ՈԳՆԱԿԵՆՆ Ե

Փոխադրեց՝ Կ. Կ. ՄԵԼԻՔ.ՇՈՒՆՈՒՐՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

08 APR 2013

16020

Ի՞ՆՉ ԲԱՆ Ե ՏՐԱԿՑՈՐԸ

Շատերը լսած կլինեն տրակտորի մասին,
բայց նրա յերեսը չեն տեսել։ Տրակտորը գյու-
ղատնտեսական մի մեքենա յե, վորը գործադրո-
վում ե գրեթե գյուղատնտեսական բոլոր աշ-
խատանքների ժամանակ, ինչպես հերկելու, փոց-
խելու, ցանելու, հնձելու, կալսելու, այս ու այն
մթերքը փոխադրելու և այլն։

Տրակտոր բանեցնելու համար աչքի առաջ
պիտի ունենալ տեղական պայմանները. նա լավ
բանում ե դաշտավայրերում և քարերից ազատ
սարալանջերում։

Տրակտորների առաջակները շատ են Ռուսաստա-
նում և Կովկասում, Վրաստանում, Ադրբեյջանում
և Հայաստանում ընդունված ե Յորդգոնին, վորը
ավելի համապատասխանում ե մեր յերկրի պայ-
մաններին*):

Տրակտորն արտասահմանում և թե Ռուսաս-



*.) Մինչև 1930 թիվը Խորհրդային Հայաստան մտել են՝
Ֆորդզոն-178 և Ֆորդզոն Պուտիլկե-14 հատ, Կեյս-15 հ.,
Խնաերնացիսնալ փաքը տեսակը-11 հ., մեծ տեսակը-10 հ.,
Վալիս-1 հ., Ավանս-8 հ., Պրակա-2 հ., Ընդամենը 239 հատ, վո-
րոնցից իրքի անպետք աշխատանքից յելած են Վալիսը, Ավանսը,
Պրական, Կեյսից 1 հատ և Ֆորդզոնից 19 հատ, Ընդամենը 31 հատ,
ուրեմն մուռմ են գործադրության մեջ 208 հատ։

տանի գործարաններում շինում են շատ և քիչ ուժանոց, նայելով թե ինչ բանի համար պետք է գործադրվի, քանի վոր գյուղատնտեսական աշխատանքներն ամեն տեղ միանման չեն, ինչ-պես և տնտեսությունների պահանջը. որինակ՝

1. Բանջարաբուծության շրջանների համար շինում են փոքր, քիչ ուժանոց տեսակը, այն հաշվով, վոր որական կարելի լինի մի դեսիատին տեղ հերկել:

2. Պտղատու այգիների համար նույնպես պատրաստում են փոքրիկ տրակտորներ, վոր ազատ կարելի լինի բանեցնել ծառաշարքերում և թե նրա միջոցով վասատուների դեմ սրսկում կատարել:

3. Համայնական աշխատանք տանող գյուղացիների, արտելների, ընկերությունների, կոոպերացիաների և մեծ տնտեսությունների համար 20—25 ձիու ուժ ունեցող տրակտորներ են գործադրում և նրանցով վերոհիշալ բոլոր աշխատանքները կատարում:

1924 թվին միլիոնից ավելի տրակտորներ ելին բանում բոլոր յերկրներում, Ռուսաստանում՝ միքանի հազար: 20—25 ձիու ուժ ունեցող տրակտորի յետելից կարելի յեկապել 2—3 գութան հերկի ժամանակ. 2 կամ 4 անիվակոր սայլեր կապելով կարելի յե փոխադրել մի-

անգամից 250 փութ մթերք — հունձ, գոմաղբ, փայտեղեն և ամեն ինչ:

Գյուղական տրակտորները լինում են անիվակոր յերկու յետեկի անիֆլերով կամ չորս, կամ շարժվում են յետեկի մի լայն անիվի ոգնությամբ: Բոլոր անիվակոր տրակտորները սովորաբար գործադրում են վոչ ճախճախուտ տեղերում, իսկ այն շրջաններում, վորտեղ հողերը ճախնալին են և կակուղ, այնտեղ գործադրում են բրթուրային կոչված տրակտորներ, վորոնք շարժվում են մի առանձին ձկուն մետաղյա լենտի ոգնությամբ, վորը անց և կացրած անիվին և թրթուրալին անունն ունի:

Բացի 20—25 ձիու ուժանոց տրակտորները կան և 35—50 և 75 ուժանոցներ. դրանք 10—12 խոփանոց գութաններ են քաշում իրենց յետեկից և մի որվա մեջ ահազին աշխատանք կատարում, մինչև 10 դեսիատին տեղ հերկում:

Կան և ուրիշ տեսակի տրակտորներ ճանապարհներ շինելու, առուներ փորելու, անտառային աշխատանքներ կատարելու, և զրանք միմյանցից քիչ տարբերություն ունեն. կան, վոր հատկապես շինված են գութաններ միացրած՝ հողը հերկելու կամ մի տեղ կանգնեցրած՝ կալսող մեքենա բանեցնելու. զրանք «տվտողութան» (ինքնաշարժ գութան) անունն ունեն:

Քանի վոր տրակտորի գործածությունը գյուղացու անտեսության մեջ պետք է մեծ տեղ բռնի և փոխարինի ձիու և այլ լծկան անասունների, ուստի պետք է ծանոթանալ, թե նա ինչ աշխատանքներ ե տանում, ինչ ծախք ե նստում նրան բանեցնելը վորտեղից տրակտոր բերել և ինչպես կամ ինչով բանեցնել:

Տրակտորը բաղկացած է միքանի մեքենական մասերից, գործոց մեջ առաջին տեղը ըլունում է շարժիչ մեքենան իր մասերովը։ Շարժիչ մեքենայում նավթ, կերոսին կամ բենզին վառելով նրա պտտվող գլանակն սկսում է պտըտվել և տրակտորն առաջ մղել։ Կերոսինի շարժիչ մեքենայով բանող տրակտորն ավելի արագ ե բանում, քան նավթովբանողը. բացի այդ նա թեթև ե և եժան ե նստում, ինչ վերաբերում է բենզինին, ճիշտ ե, նա ավելի արագ է շարժում անիվը, բայց յերեք անգամ թանգ ե նստում, քան կերոսինը. յեթե մի դեսիատին տեղ հերկելու համար միջին հաշվով կերոսին գնում է 1 ռ. 50 կ. կամ 1 ռ. 75 կ., բենզինը նստում է 4 ռուբլի և ավել.

ՏՐԱԿՏՈՐԸ ՄԵԶ Ի՞ՆՉ ԲԱՆԻ ՀԱՍԱՐ Ե ՀԱՐԿԱՎՈՐ

Գյուղացու անտեսության հաջողությունը կախված է նրանից, թե վորքան նա ապահով-

ված է լծկան անտառուններով, վոր իր ժամանակին դաշտային բոլոր աշխատանքները կատարի և միաժամանակ ձմեռվա կերի կողմից ել ապահովված լինի։

Շատ անգամ պատահում է, վոր յերաշտի կամ այլ ուրիշ աղետների պատճառով գյուղացին հարկավոր քանակությամբ կերի պաշար չի ունենում և ստիպված է լծկանները ծախել կամ նրանց ձմեռը քիչ կեր ուտեցնել։ Սովորությունից լծկաններն ուժից ընկնում են, հողը մնում է անմշակ, մոլախոտով ծածկվում, ավելի պնդանում և ավելի մեծ աշխատանք պահանջում։

Տրակտորն այդպիսի պահանջներ չունի. նրան վոչ գարի յեւ հարկավոր, վոչ խոտ, վոչ դարձան. նա չի վարակվում սիրիքախտով, ժանտախտով. շնաձանձները, վոջիլները չեն նեղացնում, նա կարող է 24 ժամ գիշեր-ցերեկ աշխատել։ Տրակտորը շատ աշխատավորներ չի պահանջում. նրանով թե հողը լավ ե հերկվում, թե մի դեսիատին տեղից 10—15 փութ և ավելի բերք ստացվում, բան լծկան անասուններ բանեցնելուց։

Յեթե մենք հիմա հողերում 100.000 հատ տրակտոր բանեցնենք, գրանով մի միլիոն լծկան աղատած կլինենք։ Մի 25 ուժանոց տրակտորը 10 ձիու աշխատանք է կատարում, ասել ե՝ այդ-

պիսով տարեկան 150 միլիոն փութ կեր կլինենք տնտեսած, իսկ այդ անտեսած կերը կովերին, վոչխարներին, խոզերին ուտեցնելով, թե նրանց ապահոված կլինենք կերի կողմից և թե մեր յերկրի արդյունաբերությունը մեծացրած:

Ցեթե մենք 100.000 տրակտոր ունենանք Խորհրդային Միություններում, մի միլիոն լծկանի պահանջ չենք ունենալ և կարող ենք այդ լծկանների փոխարեն կով, վոչխար, այծ, գոմշակով պահել և կաթնատնտեսությանը դարձ տալ:

Տրակտոր բանեցնելուց՝ յեթե բերքը 15 փութ ավելանում ե, ասել ե՝ միքանի տասնյակ միլիոն փութ հացահատիկ կստացվի, և դրանով ել կարելի յե կաթնատու անսառունների թիվը ավելացել:

Յորդգոնի տրակտորով կարելի յե միանդամից 250 փութ մթերք փոխադրել, մի ժամում 12 վերստ անցնելով, իսկ ավելի ուժեղ տրակտորով կարելի յե 500—600 փութ բեռնել:

Տրակտորն անհրաժեշտ ե գլուղացու տընտեսության մեջ:—Այս, անհրաժեշտ ե, դրան խոսք չկա:

1. Վոր իր ժամանակին և կարճ միջոցում արտատեղը հերկվի, նրա մեջ շատ խոնավություն ծծվելով յերկար մաս և բույսի աճելությանը ոգնի:

2. Խամ, չմշակված հողերը հերկելու և այն դեմի հողերում, վոր յերաշտ տարիներին անգամ առատ բերը ստացվի:

3. Հասած հացաբուլսերը շուտով հնձելու, վոր նա չվաղանի, չթափվի արտի մեջ:

4. Վոր բանվոր անսառունները կրծատելով, մյուսների համար կերը շատանա:

5. Հացահատիկների պահանջը կշատանա արդյունաբերությունը զարգանալով:

6. Բանվորի ու գլուղացու միջև քաղաքական ավելի ամուր կազ կստեղծվի և նրանց կվարժեցնի համայնական աշխատանքի:

7. Կնպաստի ապրանքների և մթերքների եժան և արագ փոխադրությանը այն շրջաններում, վորոնք հեռաւ յեն ընկած յերկաթուղուց կամ կայարաններից:

Այդպիսի պայմաններում տրակտորին արդարացի կլիներ «գաշտերի հեղափոխական» անունը տալ, վորովհետև Խորհրդային Միությունների արավարեկյան անտեսություններն այնպեսավ չեն կազմակերպված, և անհրաժեշտ ե հողագործական հեղափոխությունը, Պետք ե նոր տեսակի բարեփոխություններ մտցնել, վոր այդ տընտեսությունները կերպարանափոխվեն: Այդ նորամուծության մեջ մեծ դեր պիտի խաղա տրակտորը, հողի մշակության պապենական սու-

վորություններից ազատի և միլիոնավոր մարդկանց ոգնի քաղցի և դժվար աշխատությունների ճիրաններից դուրս գալու:

ՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆ Ե ԵԺԱՆ ՆՍՏՈՒՄ՝ ՁԻՌԻ ԹԵ ՏՐԱԿՏՈՐԻ

Յեթե գյուղացին իր տնտեսության մեջ ձի յե պահում լծելու կամ բեռ տանելու համար, նրան պետք ե գարի, դարման, խոտ ուտացնի. բացի այդ լծելու կամ բեռնելու համար պետք ե սարք ունենա, հարմար գոմ, կանոնավոր խնամք, հսկողություն, վոր նա չիվանդանա սիբիրախտով, քոսով, չումայով և ուրիշ վարակիչ հիվանդություններով:

Յեթե հաշվենք ձիու արժեքը, նրա կերը, խնամքը, սարքը, բժշկությունը և որական 8—10 ժամ աշխատեցնելը և այն՝ 10 տարվա ընթացքում նրա բանած որերը, կտեսնենք, վոր նա մեզ ավելի թանգ է նստում, քան տրակտորով աշխատանքը:

Փորձերը ցույց են ավել վոր 200 ռուբլի արժողությամբ մի բանող ձին, 10 տոկ. հաշվելով նրա վրա դրած գումարը՝ 20 ռ., ծախք կնստի, 365 որվա կերը՝ 150—200 ռ. կամ միջն հաշվով 175 ռ., ինվենտարի, հնացած սարքի նորոգության, բժշկության, նալելու, ապահո-

վության և ալին, տարեկան ծախք 20 ռ., անպես վոր ընդամենը 215 ռ. տարեկան ծախք ե պահանջում. իսկ ի՞նչ ե մեզ տալիս. յեթե լծկան ձին ամբողջ ամառը հողը հերկի, նա 25 դեսիատին տեղի վրա ծախք կլինի 215 : 25 = 8 ռ. 60 կոպեկ, և այդ հերկը կլինի լերեսանց, 3 վերջոկ խորությամբ. Լծկան յեզ և գոմեշներով հերկը մեզանում նստում է 10—12, մինչև անգամ 15 ռուբլի:

Այժմ տեսնենք՝ տրակտորով մի դեսիատին տեղի հերկը ի՞նչ է նստում:

Ռուսաստանում ամենատարածված տրակտորը ֆորդոնի 25 ուժանոցն է, արժենում է իր գութանով 1800 ռուբլի. նա 4 տարվա ընթացքում հերկում է 700 դեսիատին տեղ, ուրեմն մի դեսիատինը նստում է 2 ռ. 57 կոպ., կերուին զնաւում է մի դեսիատինին 1 փութ 15 ֆ., 1 ռ. 20 կոպ. հաշվելով փութը, մի դեսիատինի ծախքը կլինի 1 ռ. 65 կոպ., բացի այդ մի դեսիատինին պահանջում է $4\frac{1}{2}$ ֆ. ձիթելու յուղ, 90 կոպ. (յուղի արժեքը փութը 8 ռ. ե): Հաշվելով և 75 կոպեկից մինչև մի ռուբլի նորոգությունը, ընդամենը հերկի ծախքը կնստի 6 ռ. 10 կոպ., չնայելով վոր տրակտոր բանեցնողները հաղորդում են, վոր իրենց 3—4 ռուբլի լենը ստում մի դեսիատին տեղի հերկը:

վոր գյուղատնտեսական աշխատանքների պայմաններում բանվորական որը սովորաբար յերկարում ե 16 ժամ, ասել ե՝ տրակտորն այդպիսի որվա մեջ կարող ե 4 վերջոկ խորությամբ 4 դեսիատին տեղ հերկել կամ մի ժամում $\frac{1}{4}$ դեսիատին։ Հողը խոր հերկելուց կարող ե շատ աննշան տարբերություն լինել։ Միայն կերպուինի կամ նավթի ծախքն ե փոխվում ամեն մի հերկված դեսիատինին։

Յեթե գյուղատնտեսության մեջ ավելի ուժեղ տրակտոր բանեցնենք, որինակ՝ 40 ուժանոց, ամեն մի ժամում նա $\frac{2}{5}$ դեսիատին տեղ կհերկի կամ 16 ժամվա ընթացքում $6\frac{1}{2}$ դեսիատին տեղից ավելի։ Մի խոսքով՝ 10 ձիու ուժունեցող տրակտորը, 10 ժամ բանելով, մի դեսիատին տեղ ե հերկում, իսկ հմուտ վարպետի միջոցով՝ ել ավելի։

Յեթե մենք 4 վերջոկ խորությամբ ձիերով հերկը կատարենք, ամեն մի ձին 10 ժամվա ընթացքում միայն $\frac{1}{4}$ դեսիատին տեղ կարող ե հերկել, իսկ $2\frac{1}{2}$ դեսիատին տեղ հերկելու համար 10 ժամվա ընթացքում 10 ձի կհարկավորվի։ Ահա թե ինչու այժմ հաշվի լին առնում, վոր 25 ուժանոց տրակտորը տնտեսության մեջ տաս ձիու կարող ե փոխարինել։ Այս ել պետք ե ասել, վոր տրակտորը կարելի յե բանեցնել

ամբողջ որը, գիշեր ու ցերեկ, նա չի նեղանալ, միայն բանեցնողին մի ուրիշը պետք ե փոխարինի, այնինչ ձիերն որական 16 ժամ չեն կարող աշխատել. Նրանց համար այդ ծանր ե։

Մեզանում՝ կովկասում, ցավելով պետք ե ասենք, վոր հողի հերկը գլխավորապես կատարվում ե յեզ ու գոմեների միջոցով, 4 զուգից մինչև 6 զույգ ե ավելի լծկաններով, 4—5 հոգով. որական 10 ժամ բանելով, հազիվ են կես դեսիատին տեղ հերկում և այն՝ փափուկ հողերում, իսկ պինդ հողերում, սաբալանջերում 6—8 զույգ լծկաններն ել հազիվ են $\frac{1}{2}$ դեսիատին տեղ հերկում։

Դրանից կարելի յե հետեցնել, թե ինչքան մեծ ծախք ե նստում և աշխատանք թափում գլուղացին մի դեսիատին տեղի վրա։

Մի դեսիատին չմշակված (խամ) ծանր հողը 4 վերջով խոր հերկելու համար կերպուին գնում ե 1 փութ 15 ֆ., իսկ քսելու յուղ՝ 4 ֆ., իսկ վերջերս դուրս լեկած նոր տիպի տրակտորներին գնում ե կերպուին մոտ 1 փութ։ 1923 թվին՝ համամիութենական ցուցահանդեսին տրակտորները փորձելիս յեղել են վառելու այնպիսի մեքենաներ, վոր 24—25 ֆ. կերպուին ե միայն գնացել։

Յեթե հողն անմշակ ու պինդ ե, մի դե-

սիստմինին գնում ե 1 Փութ 15 ֆ. կերոսին, իսկ թեթև, փափուկ հողերում՝ մոտ 1 վ., բացի այդ, մեծ նշանակություն ունի և արտատեղի յեր կար ու կարճ լինելը. յերկար լինելիս, տրակտորն ավելի մեծ տեղ ե հերկում, իսկ փոքրիկ տարածություն ունեցող արտերում քիչ տեղ և միաժամանակ ավելի կերոսին մխսում. Դրա համար ել ավելի ձեռնտու յե տրակտորով հերկելիս միքանի անտեսություններ միանան, արտել կազմեն և համայնքով հողը հերկեն, վոր քիչ ծախք ու աշխատանք գնա:

Փոցխելը: Հողի մշակության մեջ յերկրորդ նշանավոր աշխատանքը համարվում ե հերկելուց հետո փոցխելը: Փոցխելը լինում ե ծանր ու թեթև: Ծանր փոցխելու ժամանակ, որինակ՝ ափսեավոր փոցխով, տրակտորը գրեթե յերկու անգամ ավելի գործ ե տեսանում, քան հերկի ժամանակ: Իսկ յեթե փոցխելը յերկաթի սովորական փոցխով կատարվի, նա որվա մեջ չորս անգամ ավելի կփոցխի. յեթե 25 ուժանոց տրակտորը 10 ժամում որական դես. $2\frac{1}{2}$ դես. տեղ հերկի, նա կփոցխի մոտ 10 դեսիատին տեղ: Արդար ել նույնպես 25 ուժանոց տրակտորը 10 ձիու կփոխարինի:


Փոցխելիս ամեն մի դեսիատին տեղին գնում ե 15—20 ֆ. կերոսին և մոտ 2 ֆ. լուղ:

Տրակտորով փոցխելիս նրա յետեից շատ փոցխեր են կապում, վոր նրա բոլոր ուժն ոգտագործվի:

Սերմի ցանելը: Ցանելու համար հայրենիքն ոգտագործում են արակառը և նրա յետեից 2—3 և ավելի սերմացան մեքենաներ հաղում: Տրակտորով մի որում կարելի յե մինչև 20 դես սիստմին տեղ ցանել: Ամեն մի դեսիս տինչնոցը

380/S-12

25
3
25
3
25




նում ե 10 ֆ. կերոսին: Տրակտորով ցանքն ավելի շահեկան է. այժմ գործարանները տրակտորին հարարեցրած հատուկ սերմացան մեքենաներ են բաց թողում:

Հացարույերի յեվ խոների հունձնը: Տրակտորը հաջող կերպով բանեցնում են արտերը հնձելու և խոռը հարեւա, նա նույն աշխատանքներն ե կրաքրությունը մեջ մուգը ձին, այն ե քաշում ե թե հնձող և թե ինեմնար մեքենաներ:



ըլ: Սովորաբար նրան միացնում են 2—3 չորս ձի քաշող հնձող կամ խոտհար մեքենաներ: 25 ուժանոց տրակտորը մի որում կարող է 10 դեսիատին տեղ հնձել: Ամեն մի դեսիատին հնձատեղին գնում է 12 ֆ. կերոսին և $1\frac{1}{2}$ ֆ. յուղ:

Տրակտորվ հացաբույսեր յեվ մրերքներ փոխադրելը: Տրակտորն առանձին նշանակու-



թյուն ունի հնձի ժամանակ, դաշտից հունձը փոխադրելու, գոմաղբը դաշտը տանելու և ամեն տեսակ ապրանք մի տեղից մյուսը փոխադրելու: Նա մի ժամում գնում է 8 վերստ. 25 ուժանոց տրակտորը սովորական սազի ճանապարհով կարող է վերցնել 250 ֆութ բեռ: Այսպիսով յեթե մի դեսիատինը 60 ֆութ հացահատիկի բերք տա և 100 ֆ. ծղոտ, տրակտորը միանգամից կարող է վերցնել $1\frac{1}{2}$ դեսիատինի ամբողջ բերքը: Ի՞նչ վերաբերում է վառե-

լիքին, նա լիքը բեռնված ժամանակը ծախսում է մի վերստ տեղին 4 ֆ. կերոսին և $\frac{1}{4}$ ֆ. յուղ: Այսպիսով յեթե տրակտորը, յենթադրենք, 250 ֆութ բեռ է վերցնում, նա 10 վերստ տեղ տանելիս և դատարկ լետ դառնալիս ծախսում է մոտ 50 ֆ. կերոսին և 4 ֆ. յուղ:

Տրակտորի աշխատանքը տեղում կանգնած: Այդաշխատանքին վերաբերում է հացահատիկների կալսելը, ալյուր աղալը, փայտեղենի սղոցելը, ձիթհան գործարան բանեցնելը և ուրիշ գործեր: Այդ բոլոր աշխատանքները հեշտ են ու պարզ: Որինակ՝ յերբ սւզում են կալսել տրակտորը կանգնեցնում են կալսող մեքենայի մոտ, փոկով նրա անիվը միացնում: Տրակտորը շոգեշարժ մեքենայի (լոկոմոբիլի) դերն է կատարում:

Այդպես ել տրակտորը սղոցարանի, աղալու և ուրիշ գործիքներին միացնելով բանեցնում են և կարճ ժամանակում թե ահագին աշխատանք կատաքում և թե ծախքը քչացնում:

Որինակով բացատրենք. յենթադրենք, վոր տրակտորը բանում է կալսող բարդ մեքենայի հետ, վորը գործի զցելու համար պահանջում է վոչ պակաս քան 10 ձի: Որինակ՝ 10 ժամ բանող ձիերի վարձը մեկական ոռւբլի հաշվելով, 10 ձիերի համար պետք է վճարել 10 ոռւբլի:

Բացի այդ, կհարկավորվեն 2—3 չափահաս քշողներ, վորոնք որական նստում են զոչ պակասքան 50 կոպ., ուրեմն ձիերը և քշողները նըստում են 10 ո., 50 կոպ.: Տրակտորով՝ բանելիս ամեն մի ուժին մի ժամում, ընդամենը 10 ժամում՝ 10 ֆունտ կերոսին կզնա, իսկ 10 ձիանոց կալսող մեքենան բանեցնելիս կհարկավորվի 12 ձիու ուժ ունեցող տրակտոր կամ 25 ուժանոց սովորական տրակտոր՝ միայն նըսկես ուժն ոգտագործելով։ Այդ դեպքում նա վոչ թե իր ամեն մի ուժի համար մի ֆունտ կերոսին կվերցնի, այլ կես ֆունտ։ Այդպիսով 25 ուժանոց արակտորը 10 ժամ բանելով, կերոսին կվերցնի 125 ֆունտ կամ՝ 3 ֆ., 5 ֆ., իսկ լուղ՝ 8 ֆ., կերոսինը կնսափ 4 ոռոբի, իսկ լուղը 1 ո., 60 կոպ. դրա հետ հաշվելով նըսկետ կապված և մյուս ծախքերը, ինչպիսիք են՝ տրակտորի մաշվելը նրա խնամքը՝ 2ո., ընդամենը կալսող մեքենայի վերաբերյալ ծախքերի հետ կինը 7ո., 60 կոպ., այն է՝ 2 ո., 90 կոպ. եժան, քան 10 ձի բանեցնելուց, վոր 10 ո., 50 կոպեկ են նստում։

Սակայն տրակտորի առավելությունը նըսկամեջ չեն, վոր կալսող մեքենա բանեցնելիս կամ բեռ տանել-բերելիս ձիերից ավելի քիչ ծախք են նստելու, այլ և նըսկամեջ, վոր տրակտորով

շատ արագ կարելի յե հացահատիկները կալսել կամ հունձը հավաքել ու տուն փոխադրել։ Հայտնի յե, վոր իր ժամանակին հունձը վերջացնելով, շուտով տուն բերելով ու կալսելով թե դաշտում քիչ ցորեն կփչանա, և թե հացահատիկները լավ հատկություն կունենան։

Այդ առավելությունները կբարձրացնեն այն անտեսության արդյունաբերությունը, վորակղ տրակտոր կբանենցնեն։

Տրակտորը կարող են նպաստել և արհեստական վոռոգման ժամանակ ջրմուղ մեքենաներ (նասոսներ) բանեցնելիու։ Նա գետերի, առուների մոտ դրվելով, կարող ե ջրմուղը բանի գցել և ցած տեղերից ջուրը բարձրացնել դեմի հողերը ջրելու։ Այս վերջին ժամանակներում արտասահմանում փորձեր են կատարվում անձրևային լեղանակով դաշտերի մեքենական վոռոգման։ Այդ կատարվում ե այսպես. տրակտորն առանձին պլատֆորմի վրա վերցնում ե տակալաներ, նըսկամ մեջ ջուր լցնում, տանում դաշտը՝ ասենք թե՝ մի 5 վերստ ջրի տեղից հեռու և այնտեղ ջրմուղներով արհեստական անձրև առաջ բերում։ Այդպիսի 5 վերստ տեղ գընալ, ջուր բերելը նստում ե մոտ 5 ո., յեթե որվա մեջ 5 անգամ ջուր բերի, 1700 վերը ջուրը բերած կլինի. այդ միջոցը լավ ե յերաշտ

տարիներին, յերբ ջրի մեծ կարիք ե զգացվում:

Տրակտորը բանեցնում են և պատերազմի ժամանակ մթերք, հրետանի (թնդանոթ) և այլ ծանր բեռներ փոխադրելու:

Ճանապարհներ բանալիս տրակտորը նույնպես մեծ ոգնություն ե հասցնում և գործն եւ ժան նստեցնում: Տրակտորին կապում են առու հանող գութան, վոր ճանապարհի յերկու կողմով տանելով առու յե բանում և հողը ճանապարհի վրա դցում: Այդ անելուց հետո տրակտորն իր յետեկից քաշում ե ծանր գլանակներ — հարթիչներ և ճանապարհը պնդացնում: Ամերիկայում գյուղերի բոլոր ճանապարհները տրակտորի ոգնությամբ են շինված: Այդ ձեռվ ճանապարհ շինելն ավելի եժան և նստում, բան ձեռքի աշխատանքը, մինչև անգամ մեր պայմաններում, վորտեղ բանվորական աշխատությունը շատ եժան և նստում:

Ի՞ՆՉՊԵՍ ԼԱՎ ՈԴՏԱԳՈՐԾԵԼ ՏՐԱԿՏՈՐԸ

Յերբ գյուղատնտեսության մեջ տրակտորի գործադրության հարցը դրվեց, ամենաշատ վեճի առարկա դարձավ նրա կանոնավոր գործադրության հարցը: Մինչև այժմ ել կարելի յե պատահել մարդկանց, վորոնք կասկածում են և չգիտեն՝ ինչպես կողտագործվի տրակտորը գյուղացու տնտեսության մեջ: Կասկած չկա, վոր

տրակտորը պետք ե ոգտագործվի հենց իրենց գյուղացիների ձեռքով: Բայց դյուղացիներից հվ և ինչպես պետք ե նրան բանեցնի, ոգտագործի:

Տրակտորը կարող են գնել գյուղի հարուստները, համայնքը, արտելը, կոոպերատիվները կամ գյուղական հասարակությունը: Ամենալավ միջոցը տրակտորն ոգտագործելու համար, ինչպես ցույց ե տվել գործնականը, այդ համայնական ձևն ե, յերբ 10—15 և ավելի ընտանիքներ մի տրակտոր են գնում և իրենց համայնական տնտեսության մեջ գործադրում:

Սակայն, աչքի առաջ ունենալով, վոր 15 ընտանիքը ձեռքի տակ ընդամենը 50—70 դեսիմատին հող հաղիվ են ունենում, վոր տրակտորը պարապ չմնա, բոլոր ժամանակ ոգտագործվի, կողմանակի աշխատանքներ ել են վերցնում կամ ուրիշ միջոցների դիմում:

Սարատովի նահանգում ամեն մի համայնք, վորը տրակտոր ունի, իրեն միացնում և 10—15 աղքատ ընտանիքներ, վորոնք լծկաններ չունեն: Այդ ձեր առավելությունը նրա մեջն ե, վոր աղքատ ընտանիքները միանալով, հավաքական (կոլեկտիվ) ուժերով ավելի ևս զարկ են տալիս հողի մշակության: Բերքի հավաքելը կատարվում ե տրակտորի միջոցով, և զաշտում բա-

ժանում են խուրձերն իրենց մեջ կամ կալսելուց հետո հատիկները և ծղուար հավասար բաժանում:

Սարատովի նահանգում 1914 թվին 1000 աղքատ ընտանիքներ միացված են արդպիսի կոլեկտիվների և աղքատ զասակարդի կենցաղը տրակտորի շնորհիվ բարելաված:

Հավաքական ուժերով կամ ընկերությամբ տրակտոր ոգտագործելու առավելությունը նըա մեջ ե՝ առաջին, վոր նա իր ձեռքի տակ նյութական միջոց կունենա տրակտոր գնելու, գյուղատնտեսական բանկեր և այլ հաստատություններ մեծ հաճուքով կոլեկտիվներին վարկ բաց կթողնեն արակտոր գնելու, քան առանձին անհատների։ Յերկրորդ՝ կոլեկտիվի անտեսությունն ավելի մեծ ե իր չափով, քան մի գյուղականին. վրա համար ել տրակտորը մեծ անտեսությունների մեջ ավելի լավ կողտագործվի քան փոքր անտեսության մեջ։

Յերրորդ՝ ամեն մի կոլեկտիվ մանում և դյուղատնտեսական արդյունաբերական կոոպերացիաի կազմի մեջ, վորն իր անդամների համար ձեռք և բերում կերպին, նավթ, յուղ, մեքենաների մասեր, նորոգում մեքենաները, այսպես վոր, յեթե մի վորեւ շրջանում տարածվում ե տրակտորը աղքաբնակության մեջ և այնտեղ

կազմակերպված են կոլեկտիվ կամ կոոպերատիվ ընկերություններ, այն ժամանակ գյուղանտեսական կոոպերացիան պետք է ունենա շըանալին պահեստներ, բոլոր նյութերի և մեքենաների մասեր, վորոնք անհրաժեշտ են տրակտորի աշխատանքի հաջող զարգացմանը։

Բացի նյութական ոգնությունը տրակտոր բանեցնող աղքաբնակությունը, կոոպերացիան իր վրա իւ վերցնում և տեխնիկական ոգնությունը, այն ե՝ աեխնիկներ, մեքենավարներ պահելը, վորոնք պարտավորվում են սովորեցնել գյուղացիներին արակտորով հողի հերկելը։

Այն տեղերում, վորտեղ դեռ կոոպերացիաներ չկան, բայց աղքաբնակությունը տրակտոր ե գնել, պետք ե կոլեկտիվ կազմակերպություն հիմնել, վոր տրակտորն ավելի լավ ոգտագործվի։ Այնտեղ, վորտեղ կոոպերացիա կա, արակտորը լավ ոգտագործելով, նըանից մեծ շահ կստացվի։ Իսկ այնտեղ, վորտեղ կոոպերացիա չկա, բայց աղքաբնակությունը ցանկանում ե տրակտոր ձեռք բերել, այնտեղ տրակտորը շատ բարեհաջող պայմաններ կսաեղծի կոլեկտիվների և կոոպերատիվների զարգացման և ավելի լավ կողտագործվի։

Ինչպես հայտնի յե, այժմ մեծ նշանակություն են տալիս գյուղում գործող ամեն տեսակ

կոռպերացիաներին։ Վլադիմիր իւյիչ լենինը յեռանդով ցույց եր տալիս, վոր պետք ե ուշադրություն դարձնել գյուղերում կոռպերացիայի զարգացման վրա, տրակտորի ոգտագործման գյուղատնտեսության մեջ նա առանձին նշանակություն եր տալիս։

Յեվ այդ հասկանալի յե. տրակտորը յեթե գյուղի մի հարուստ կուլակ ձեռք բերի, ասել ե նա 10 ձի յե գնում և 5 բատրակ (բանվորներ) վարձում, վորովհետև ամեն մի 25 ձիու ուժ ունեցող տրակտորը անտեսության մեջ փոխարինում ե 10 ձիու և 5 վարձու բանվորի։

Կուլակը տրակտոր գնելով, նա վոչ միայն իր հողը կհերկի, այլև աղքատ, լծկան չունեցող դասինը. այդպիսով կուլակը աղքատին իր ճորտը, իր ստրուկը կդարձնի։

Տրակտորը կուլակի ձեռքն ընկնելը նշանակում ե բռնանալ աղքատի վրա և մասնավոր կապիտալ ձեռք բերելու միջոց ունենալ։ Դրա առաջն առնելու համար աղքատ դասակարգը պետք ե անդատճառ միացյալ ուժերով տրակտոր ձեռք բերի և իրեն վարկ բաց թողնելու համար աշխատի. այդ ժամանակ կապիտալ հավաքելու միջոցը վոչ թե կուլակի ձեռքին կլինի, այլ աղքատ և միջակ կոլեկտիվների։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԽԾԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏՐԱԿՏՈՐԸ

Տրակտորի գործածությունը գյուղատընտեսության մեջ, մանավանդ գյուղացու հողերի վրա, սկսվել ե սովետական իշխանությունը հաստատվելուց։ Ցարական իշխանության ժամանակ Ռուսաստանում միքանի տրակտոր կային, վորոնք զլխավորապես գործում եին կալվածատերերի տնտեսության մեջ։ Գյուղացիությունը նրանց մասին գրեթե զաղափար չուներ։ Յեվ այդ հասկանալի յե, քանի վորցարական իշխանությունը գյուղացու տնտեսությունը բարելավելու գործով չեր հետաքրքրվում։ մանավանդ նա վախենում եր, վոր աշխատավոր գյուղացիությունը, տրակտորի միջոցով կոռպերացիա կազմելով, կալվածատերերի համար վըտանգավոր ուժ կդառնա։ Յեթե մեր գյուղացիները պատերազմից առաջ տրակտորներ ունենային, կշատացնելին իրենց արդյունքը, կրարձրացնելին իրենց կուլտուրան և թուզ չելին տալ, վոր կալվածատերերը պրիստավերը և ցարական կառավարության մյուս չինովակներն իրենց հետ գաղանաբար վարվելին։ Ահա թե ինչու ցարական կառավարությունը վախենում եր մեր գյուղատնտեսության մեջ բարելավում-

ներ մտցնել, ինչպիսիք են տրակտորը, ելեկ-
տրականությունը և այլն:

Յարական և կերենսկու իշխանությունը
ընկնելուց և քաղաքացիական կոփները վերջա-
նալուց հետո խորհրդային իշխանությունը հենց
սկզբից իրեն նպատակ դրեց ամեն կերպ ոգնել
գուղին և գլուղացու աշխատանքը թեթևացնել:

Անմոռանալի Վ. Իլյիչ Լենինի մշտական
հոգուն այն եր, վոր վորչափ հնարավոր և շու-
տով լերկրի անտեսությունը բարեփոխվի, հողի
մշակության նոր ձևեր մանեն: Լենինը միշտ ա-
սում եր՝ քանի վոր մեր գյուղերում մանր տըն-
տեսություններ կան լեռամբա ցանքաշրջանով,
հողերը հերկվում են արորով, հունձը կատար-
վում ե մանգաղով, մենք գյուղացու կյանքի
պայմանները չենք բարելավիլ:

Յեթե մեր գյուղատնտեսության մեջ դըժ-
վար և 8 ժամվա աշխատանք մտցնելը, պետք ե
գյուղացուն տալ այնպիսի մեքենա, վոր նա իր
հողի վրա քրածինք չթափի, այլ իր աշխատանքը
զվարճություն պատճառի:

Գյ ւղացու ամենածանր աշխատությունն
ամռանն ե լինում, յերբ քրածինք իր շապիկը
չի ցամաքում: Պետք ե մեր գյուղին այնպիսի
մեքենաներ տալ, վոր կարողանան մարդկային
տշխատանքները թեթև դարձնել և քիչ ծախք

պատճառել. այդպիսի մեքենան տրակտորն ե:
Պատերազմը վերջանալուց հետո, յերբ խորհր-
դային իշխանությունն հաստատվեց, տերությունն
անցավ խաղաղ աշխատանքի և զլաւագորապես
ուշադրություն դարձրեց գյուղատնտեսության
վրա, տրակտորներ ձեռք բերելու և նրանց պատ-
րաստելու համար գործարաններ բանալու: Այդ
առթիվ տերությունը տրակտորային հանձնաժո-
ղով կազմեց՝ պարզաբանելու, թե քանի տրակ-
տոր և հարկավոր, ինչպիսի տրակտորներ են
պետք և ինչպիսի գործարաններում պետք ե
շինվեն: Այդ հանձնաժողովը սինչև 1922 թիվը
Պետպլանին տեղեկացրեց, վոր առաջիկա տարի-
ներին անհրաժեշտ են 200 հազարից ավելի տրակ-
տորներ, վորոնք պետք ե թեթև լինեն, միանը-
ման և վոչ բարդ տեսակի: Հարկ համարվեց «Ֆորդ-
զոն» տրակտորին գյուղացու տնտեսության մեջ
ընդարձակ տեղ տալ և 2—3 տիպի ֆորդզոնի
նման և նրա ուժունակությամբ տրակտորներ
պատրաստել:

Այժմ Լենինգրադում, Կոլոմնա քաղաքում,
Խարկովում, Ռոստովում, Ուկրայնայում և ու-
րիշ տեղերում բացված են տրակտոր պատրաս-
տելու մեծ ու փոքր գործարաններ: Սակայն
տրակտորի պահանջն այժմ մեծ ե, բերել են
տալիս մինչև անգամ արտասահմանից:

**ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՈՒԻ
ՀԱՄԱՐ Ե ՏՐԱԿՏՈՐ ՏԱՐԱԾՈՒՄ**

Նախկին կայսերական և քաղաքական պատերազմը մեր գյուղատնտեսությունը սասափիկ փչացրեց. բանող անասունները կրծատվեցին, վարատեղերը քչացան, և հացարուցերի բերքը փչացավ: 1921 թվի սովոր ավելի ես քարուքանդ արեց գյուղացու տնտեսությունը, և այժմ մեր առաջ կանգնած ե նրա վերականգնման խնդիրը:

Խաղաղ ժամանակ Ռուսաստանից արտասահման մեծ քանակությամբ հաց եր արաւահանվում (մոտ 1000 միլ. ֆութ), այժմ յեվրոպական պետությունները տեսնելով Խորհրդային Ռուսաստանի հաստատուն հիմքը, աշխատում են, վոր մենք չվերսկսենք առաջվա պես մեր մթերքների վաճառահանությունը:

Մեծ քանակությամբ հաց ձեռք բերելն անկարելի յե առանց բանող տավարի, ձիերի, իսկ բանող տավարը կամ ձին դանդաղ են զարգանում, աշխատանքի ընդունակ դառնում և չեն լրացնում գյուղատնտեսական մթերքների պահանջը: Դրա համար ել անհրաժեշտ ե դիմել «յերկաթե ձիերի», տրակտորների:

Այդ մեկ պատճառն ե: Յերկրորդ ավելի նշանակոր պատճառն այն ե, վոր տրակտորի ոգ-

նությամբ մենք կստեղծենք ավելի հաստատ պայմաններ գյուղատնտեսությունը վերականգնելու և գյուղացու աշխատությունը թեթևացնելու: Յեթե յենթադրենք, վոր մեր ձեռքի տակ 200 հազար տրակտոր լինի, այն ժամանակ մենք 40 միլիոն դեսիմատին տեղ կհերկենք, և այդ 40 միլիոն դեսիմատինից ստացված բերքը տերությանը 2 միլիարդ արդյունք կտա: Պարզ բան ե, վոր տերության արդյունքը մեծանալով, գյուղացու և բանվորի կյանքը կբարելավվի: Պետական արդյունքը շատանալով, ավելի մեծ ուժ կտանք մեքենաների գործարաններ բացվելուն և քաղաքների մեծանալուն: Քաղաքների մեծանալով, գյուղատնտեսական մթերքների թե պահանջը և թե նրա արժեքը կբարձրանա: Մթերքների գինը բարձրանալու հետ գյուղացիք բաղաքից շատ ապրանքներ կգնեն և ավելի ևս կբարձրացնեն քաղաքի առևտուրը: Յեթե գյուղատընտեսական բոլոր սեքենաներն ոգտագործվեն կոռպերատիվների և ընկերությունների միջոցով, մենք շուտով կվերականգնենք սոցիալական տընտեսությունը և կհասնենք Արևմտյան Յեվրոպայի և Ամերիկայի լեռներից:

Արևմտյան Յեվրոպայում և Ամերիկայում բուրժուազիան մեքենաների միջոցով հալածում ե պրոլետարիատին և աղքատ գյուղացիությունը,

իսկ մենք նրա ոգնությամբ պետք ե ամրապլն-
դենք պրոլետարիատի և գյուղացիության կապը
և նրանց մեջ համերաշխություն սաեղծենք:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաջորդ եջերում դնում ենք ցուցակներ և
տեղեկություններ տրակտորների արժեքի, նրանց
փոխադրության մոտավոր ծախսերի, բենզինի,
կերոսինի, և յուղի քանակի մասին 25 ուժանոց
տրակտոր բանեցնելիս և տրակտորի միջին ար-
տադրողությունը:

Տրակտոր բանեցնելիս վառելիքի քանակը
հաշված ե գործնական տվյալների վրա, սակայն
չի կարելի այդ վրացնական համարել. վառելա-
նյութի սպառման քանակը կախումն ունի տրակ-
տոր բանեցնողի հմտությունից, տրակտորի զը-
րությունից և գործի ծանրությունից և կարող ե
շատ կամ քիչ սպառվել: Որինակ՝ 1923 թվին
հին սիստեմի տրակտորով մի գեսիատին տեղ
հերկելիս 4 փութ կերոսին ե զնացել, իսկ նոր՝
Պավելի տրակտորը (իտալականը) միևնույն հո-
ղի վրա հերկելու փորձ անելիս ցուց ե տվել
մի գեսիատինին 24 փունտ. Համենայն գեպսնոր
տի զի տրակտորներն ավելի քիչ են վառելանյութ
միսում, քան հին, 1920 թ. և նրանից առաջ բաց
թողած տեսակները:

| ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
|--------------------------------|--------------------|------------------------------|---|
| ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՌԱԽՆԵՐԸ | ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ | ԱՐԺԵՔԸ Առաջնաց ՊՐԻՑԱՆԻ | ԾԱԽԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ |
| 1. Ֆորդոն, ՋԱՆԻԲ. 22 ձեռն. ու. | 73 կ. | 1375 ր. | Արտասահմանի արակե- սորմանը գլուխ հաշվառման նորության համար ան- |
| 2. ԿԷ. Ջ. Ա. 18 ք | 106 ք | 2569 ք | Արտասահմանի արակե- սորմանը գլուխ հաշվառման պահանջման |
| 3. Ինտերնացիոնալ 30 ք | 140 ք | 3500 ք | Վճարման պայմանները՝ առավական արակեսորման ու գինը իր գործարարա- նության 25 % առանձնա- |
| 4. ք | 20 ք | 120 ք | 2300 ք |
| 5. Նմերանի | 20 ք | 127 ք | 855 ք |
| 6. Խորթի | 35 ք | 275 ք | 4887 ք |
| 7. Պավելի | 30 ք | 150 ք | 3800 ք |
| 8. Զապրուժյան, ռուս. 14 ք | 120 ք | 1850 ք | Վերաբենիլու պետք ե ա- պահոված լինեն տեղական լամ լինալունական բան բան- կից: |
| 9. Կոլմանից, ռուս. 25 ք | 185 ք | 2500 ք | |
| 10. Բուսս. Ֆորդոն 32 ք | 77 ք | 1800 ք | |

ՏՐԱԿՏՈՐԸ. — 2.

Ցուցակ 2.

Տրվածոր Փոխորութեան Մուսավոր ԾԱԽՄԵՐԸ

| ԱՆՈՒՆՆԵՐԸ | Քաշը կգ. | 500 | | | 1000 | | | 1500 | | |
|---|-------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|
| | | կիլոմետր |
| 1. Գորդպան ամերիկական հասարական համար 22 ձիթուու. | 73 | 23 | — | 35 | 77 | 43 | 62 | 94 | 110 | 107 |
| 2. Կելուիք | 18 | — | 106 | 33 | 99 | 51 | 60 | 82 | 100 | 54 |
| 3. Ինսերնացիոնալ | 30 | — | 140 | 44 | 10 | 68 | 80 | 98 | 110 | 60 |
| 4. | 20 | — | 120 | 37 | 80 | 58 | 70 | 80 | 90 | 80 |
| 5. Եմերան | 20 | — | 127 | 40 | — | 62 | 74 | 93 | 100 | 93 |
| 6. Խոնթի | 30 | — | 275 | 86 | 63 | 134 | 162 | 190 | 210 | 25 |
| 7. Պալեղիք | 30 | — | 150 | 47 | 25 | 73 | 50 | 88 | 100 | 50 |
| 8. Զապրուժեց ռուս. | 12 | — | 120 | 37 | 80 | 58 | 80 | 90 | 100 | 80 |
| 9. Կոլոմենկոց ռուս. | 25 | — | 185 | 58 | 27 | 72 | — | 110 | 120 | — |

Ցուցակ 3.

Խւճան Բենջին, Կերոսին, Յուր է Գնում 25 ՈՒԺԱՆՈՅ ՏՐԱԿ-
ՏՈՐԻՆ ՄԻՋԻՆ ՀԱՇՎՈՎ

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Վարքան փուլ և ֆունտ և Ճախավում բանեցնելիս | | |
|--|--|------------|--------|
| | Բհնղին | Կելուսին | Ցուղ |
| Ճեղկելը 1 դեռ. տեղ 3 վերը. իսոր. | 1 ֆ. | 1 ֆ. 10 զ. | 5 ֆ. |
| » 1 » 4 » » » | 1 » | 1 » 20 » | 6 » |
| » 1 » 5 » » » | 1,5 » | 1 » 30 » | 7 » |
| » 1 » 6 » » » | 1,5 » | 2 » — | 8 » |
| Փողկելը 1 դ. ափսեավոր փողկով | 0,5 » | — 15 » | 2 » |
| » 1 » հասարակ » | 0,5 » | — 10 » | 1 » |
| Ցանելը 1 դ. ցորենի, զարու, վար- սակի սերմացանով | 0,5 » | — 12 » | 1,5 » |
| Հունձը 1 դ. յիրենուկի խոս- հարքով | 0,5 » | — 10 » | 1 » |
| » 1 » արսատեղի խոս | 0,5 » | — 15 » | 1,5 » |
| » 1 » ցորենի, զարու, վարսակի հնձող մեքենայով | 0,5 » | — 20 » | 2 » |
| » 1 դ. հնձող-կապող մե- քենայով | 0,5 » | — 25 » | 2,5 » |
| Կալսելը 1 փուլ հացահատիկի | — | — 0,3 » | 0,03 » |
| Փոխադրությունը ազգանքների ամեն մի վերասի | 0,2 » | — 3-4 » | 0,5 » |
| Առանց բեռի գնալիս | 0,1 » | — 2-3 » | 0,3 » |

Թուցակ 4.

ՏՐԱՎՈՐԻ ՄԻՋԻՆ ԱՐՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

| ՏՐԱՎՈՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Բանվորական ոլով 10 ժամեւա հ արտադրություն | | | | | | Առաջարկ |
|----------------------|--|--------|--------|--------|--------|--------------|---------|
| | Աղոթակ | Աղոթակ | Աղոթակ | Աղոթակ | Աղոթակ | Աղոթակ | |
| Ֆուրդոն ամիելիկալան | 2½ դ. | 6 դ. | 8 դ. | 8 դ. | 9 դ. | 8-10 400 դ. | |
| Առաստիպան | 3-5 դ. | 7 դ. | 10 դ. | 10 դ. | 10 դ. | 10-12 500 դ. | |



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցերես

| | | |
|-------|---|----|
| Գլուխ | I. Ի՞նչ բան է տրակտորը | 3 |
| » | II. Տրակտորը մեզ ի՞նչ բանի համար է հարկավոր | 6 |
| » | III. Վ՞իր աշխատանքն է եժան նստումն ձին, թե տրակտորի | 10 |
| » | IV. Տրակտորը ի՞նչ աշխատանքներ է կատարում | 12 |
| » | V. Ի՞նչպիս լավ ոգտագործել տրակտորը | 22 |
| » | VI. Խորհրդացին իշխանությունը և տրակտորը | 27 |
| » | VII. Խորհրդացին իշխանությունն ինչպէ համար է տրակտորներ տարածում | 30 |
| » | VIII. Տեղեկություններ | 32 |



ՀՀ Ազգային գրադարան



NL0280345

16020

ԳԻՆԸ 8 ԿՈՊ. Խ. (1¹/₄ մամուլ)



Е. З. Эсин
Борьба трактора за урожай

Госиздат ССР Армении
Эривань—1930